ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայցային վաղեմություն կիրառելու հիմքերի առկայության դեպքում դատարանը վճիռ է կայացնում հայցը մերժելու մասին՝ առանց անդրադառնալու գործի այլ փաստերի հաստատմանը և գնահատմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ հայցը մերժվում է հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով, Դատարանը գործի այլ փաստերի հաստատմանը և գնահատմանը չի անդրադառնում:

3. <u>Դատական ծախսերի վերաբերյալ Դատարանի իրավական վերլուծությունները.</u>

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101 հոդվածը, 109 հոդվածի 1-ին մասը, նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման և ներկայացված հայցադիմումի համար Հայցվորի կողմից վճարվել է օրենքով սահմանված չափին համապատասխան պետական տուրք, Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

4. <u>Վճռի օրինական ուժի մեջ մտնելը</u>.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12-րդ հոդվածի 1-ին մասի՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է Պատվիրատուի գործողությունների բողոքարկման հետ կապված հայց, հետևաբար, Դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ վճիռն, ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12 և 362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<Կառլին>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ Սյունիքի մարզի Կապանի համայնքապետարանի՝ ՀՀ Կապան համայնքապետարանի կողմից հայցվոր <<ԿԱՌԼԻՆ>> ՍՊԸ-ին ուղարկված՝ Համայնքի կարիքների համար կապալային

աշխատանքների կատարման /փողոցներ,բակեր,մայթեր/ գնման պայմանագիր № ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-23/06/02 ծածկագրով կնքված պայմանագիրը միակողմանի լուծելու մասին՝ 11.07.2024թ-ի ծանուցագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին հա. ԵԴ2/7359/02/24 քաղաքացիական գործով <<Կառլին>> ՍՊԸ-ի ներկայացուցչի՝ հայցային վաղեմության ժամկետի բաց թողումը հարգելի համարելու և այն վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը մերժել:

2. <<Կառլին>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ Սյունիքի մարզի Կապանի համայնքապետարանի՝ ՀՀ Կապան համայնքապետարանի կողմից հայցվոր <<ԿԱՌԼԻՆ>> ՍՊԸ-ին ուղարկված ՝ Համայնքի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման /փողոցներ,բակեր,մայթեր/ գնման պայմանագիր № ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-23/06/02 ծածկագրով կնքված պայմանագիրը միակողմանի լուծելու մասին՝ 11.07.2024թ-ի ծանուցագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը՝ հայցային վաղեմություն կիրառելու հիմքով մերժել:

3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

5. Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Արման Օհանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am